ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

9 նոյեմբերի 2011թ. թիվ 537

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011թ. հոկտեմբերի 6-ի «2011 թվականի աշնանային զորակոչի ընթացքում զինապարտների բժշկական հետազոտում և փորձաքննություն իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահներ նշանակելու մասին» թիվ 1985-Ա հրամանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների 2011թ. աշնանային զորակոչի ընթացքում հիվանդանոցային հետազոտությունն և փորձաքննությունն առավել լիարժեք ու արդյունավետ կազմակերպելու և կանոնակարգելու նպատակով ստեղծել հիվանդանոցային հետազոտության և փորձաքննության հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. նոյեմբերի 9
ք.Վանաձոր